



ՀԵՏԱԲՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Սկսած 2006 թվ-ից Էկոլոգիական հետքի առաջին սրահարկերում առկա են և հաղորդակցման և հաշվարկման ընթացակարգեր: 20-րդ դարի 70 ական թվականներին մարդկությունը երկրագնդի ռեսուրսների իր սպառման ցուցանիշներով հարեց կրիտիկական սահմանը: Մինչ այդ կենսակարողության պակասորդ դիտվում էր մի քանի պետություններում, սպա այն սկսեց տարածվել ամբողջ աշխարհում:


Ավելի քան կես դար ածխաթթու գազը մարդկության Էկոլոգիական հետքի ամենաարագ աճող բաղադրիչն է և հիմնական ցուցիչը: 1961 թվականին ածխաթթու գազը կազմում էր մարդկության ընդհանուր Էկոլոգիական հետքի 35%-ը: 2009 թվականին այս ցուցանիշն աճել է մինչև 55%: Ըստ վերջին հասանելի ամբողջական Էկոլոգիական հետքի տվյալների՝ 2009 թ. Երկրի կենսակարողությունը գնահատվել է գրեթե 12 միլիարդ գհա (գլոբալ հեկտար): Նույն տարում մարդկության Էկոլոգիական հետքը կազմել է ավելի քան 17,6 միլիարդ գհա, ինչը 1,5 անգամ ավելի է, քան մեր մոլորակի վերականգնվելու ունակությունը (նկ. 1):

Հայաստանի Հանրապետության «Էկոլոգիական հետք»-ի մի քանի տվյալներ:

Հայաստանի Հանրապետության CO₂ արտաներումները մթնոլորտ 2022թ. կազմել են 6,326,530 տոննա: Նախորդ՝ 2021թ.-ին CO₂ արտաներումների կազմել են 6927860 տոննա: 2022թ. CO₂-ի արտաներումները նվազել են -8,68% (601330 տոննա):


Հայաստանում մեկ շնչին բաժին ընկնող CO₂ արտաներումները համարժեք են 2,20 տոննայի մեկ անձի համար (2022 թ. 2,880,874 բնակչության թվաքանակի հաշվով), ինչը -0,22-ով պակաս է 2021թ. գրանցված 2,41 CO₂ տոննայի համեմատ: Բնակչության մեկ շնչի հաշվով Հայաստանի Հանրապետության CO₂-ի արտաներումները փաստացի նվազել են -9.0%-ով: մլրդ

Հայաստանի Հանրապետության CO2 տարեկան արտանետումները մթնոլորտ (մլրդ տոննա)




Նկար 1. Հայաստանի Հանրապետության CO2 տարեկան արտանետումները մթնոլորտ (մլրդ տոննա):

Հայաստանի Հանրապետություն



Նկար 2. Հայաստանի Հանրապետության էկոլոգիական հետքը: Միլիոն գլոբալ հեկտար

Հայաստանի Հանրապետություն



Նկար 3. Հայաստանի Հանրապետության էկլոզիական հետքը:
Սպառած երկրագնդերի քանակը: